

ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ (Ժ-ԺԵ դդ.)

Հայերէն ձեռագրերի յիշատակարանները անգնահատելի պատմական սկզբնաղբիւրներ են, միաժամանակ հայ ձեռագրական մշակոյթի տեղեկաշատ վաւերագրերը: Հայերէն ձեռագրերը, այլ երկրների ու ժողովուրդների միջնադարեան մատենաների համեմատութեամբ, թըրով աւելի շատ եւ անհամեմատ բազմազան ու հարուստ վկայութիւններ պարունակող յիշատակարաններն են:

Յիշատակարաններն ականատես ու ականջալուր գրիչների, նկարիչների կազմարարների, պատուիրատու-ստացողների եւ այլոց ձեռքով գրուած մեծարժէք սկզբնաղբիւրներ են եւ պատահական չէ, որ այսօր արդէն հրատարակուած է աղբիւրագիտական, պատմագիտական, մշակութային հսկայական նիւթ ընդգրկող «Հայերէն ձեռագրերի յիշատակարանների» 10 ստուար հատոր, որոնք հազարաւոր յիշատակարաններ են պարունակում: Առաջիկայում պէտք է հրատարակուեն եւս 10 նման ժողովածուներ: Հայերէն ձեռագրերի յիշատակարանների ժողովածուներ կազմող գիտնականները՝ Գարեգին Յովսէփեանը, Լեւոն Խաչիկեանը, Վազգէն Յակոբեանը, Արտաշէս Մաթեւոսեանը անմիջապէս ձեռագրերի հետ աշխատելուց բացի մեծապէս օգտուել են նաեւ հայերէն ձեռագրական հաւաքածուների ձեռագրացուցակներից, ինչպէս Յակոբոս Տաշեանի, Համազասպ Ոսկեանի /Վիեննայի Մխիթարեանների մատենադարան/, Բարսեղ Սարգիսեանի /Վենետիկի Մխիթարեանների մատենադարան/, Նորայր Պողարեանի /Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց մատենադարան/, Սմբատ Տէր Աւետիսեանի /Նոր Զուղայի/ եւ մի շարք այլ հաւաքածուների ձեռագրաց ցուցակներից:

Ստորեւ մենք համառօտ ակնարկով կ'անդրադառնանք Ժ-ԺԵ դդ. գրուած ձեռագրերում հայ նկարիչների թողած մեծ ու փոքր յիշատակարաններին եւ յիշատակագրութիւններին:

Մանրանկարիչների գրաւոր խօսքի կարճ ու համառօտ պատառիկները՝ յիշատակարանները, թէեւ ընդարձակ տեղեկութիւններ չեն պարունակում, բայց հենց նրանց միջոցով են մեզ հասել հարիւրաւոր նկարիչների անունները (հայ պատմիչների բազմաթիւ երկերում չկայ ոչ մի մանրանկարիչի անուն), նրանց օգնութեամբ տեղեկանում ենք նաեւ գրչութեան ու նկարազարդման գործի մի շարք ուշագրաւ մանրամասների, ժամանակի օգտագործուած եզրերի (տերմին) մասին եւ այլն: Հայ մանրանկարիչների յիշատակարաններն անգնահատելի արժէք են ներկայացնում, որպէս հեռու անցեալից մեզ ու գալիք սերունդներին հասցէագրուած բառ ու բան, խորհուրդ, մաղթանք, պատգամ, դրանք եզակի հնարաւորութիւն են ընձեռում անմիջականօրէն, առանց միջնորդի, ունկնդիր լինելու միջնադարեան տաղանդաշատ նկարիչների խօսքին, ինչ որ կերպ հաղորդակցուել նրանց «աշխարհին», զգալ նրանց ապրած ժամանակի շունչը:

Մանրանկարչութիւնը միջնադարում անբաժան էր գրչութեան արուեստից: Այն ունէր ոչ միայն գեղարուեստական, գեղագիտական այլեւ ճանաչողական, պատմողական, ուսուցողական, խորհրդաբանական դեր: Մանրանկարչի աշխատանքի նպատակը ձեռագիրն ու բնագիրը գեղեցիկ, դիտարժան, դիւրընկալելի եւ ներգործուն դարձնելն էր: Դրա համար էլ մատենանը ծաղկում

«զանազան նիւթաւք, ընտրելագոյն ոսկով եւ երանգ երանգ գունով» (ԺԳ, 330), Գէորգ գրչի 1154թ. մի յիշատակարանում բուն ձեռագիրը (Ճաշոց) հետեւեալ կերպ է բնութագրում՝ «Գրեցաւ աստուածային բուրաստանաց ծաղկագումար մատեանս ըստ ծաղկերանկ, նորափթիթ, վայրենարոյս շուշանաց եւ վարդից, եւ այլոց համասփիւռ ծաղկանց, որ ի լերինս եւ ի դաշտս, ի բուրաստանս եւ ի խաղս ընծեղեալք առ երկուս տեսակս ի մարդիկ զինքնեանս բաժանեն, մանաւանդ թէեւ ըստ այսմ բժշկական դեղս տուեալ ի նոցանէ, որպէս եւ ի պատուիրանաց ծաղիկս հոգւոց բժշկութիւն նոքա, եւ առ տեսութիւն եւ անուշահոտութիւն զմարդիկ ձգեն, զտեսութիւնս զուարճացուցանէն եւ զհոտոտելիս ուրախացուցանէն...» (Ե-ԺԲ, 167):

Վաղ շրջանի հայերէն ձեռագրերի յիշատակարաններում նկարիչ կամ ծաղկող բառերն ընդհանրապէս չեն հանդիպում: Իսկ երբ գրիչը նաեւ ծաղկողն էր, յիշատակարաններում միայն գրիչ էր կոչւում (Ե-ԺԲ, 76, 84): Արշարունիքի նշանաւոր գրչութեան դպրոցի բազմարդիւն ներկայացուցիչ Յովհաննէս Սանդղկավանեցիի 1053թ. Աւետարանի յիշատակարանում հանգամանօրէն նշում է այդ ձեռագրի ստեղծման գործի մասնակիցներին՝ Մովսէսին, «որ զմագաղաթն գործեաց», Դաւթին, «որ սպասաւորեաց», Թորոս խաղբակին, «որ զոսկեդեղն գուգեաց», Յովհաննէս Սողկիկին, «որ զոսկեդեղն կազմեաց», իսկ իրեն, որ նաեւ նկարիչն էր, կոչում է միայն «Յովհաննէս... գրող գրոցս» (Ե-ԺԲ, 98): Այս յիշատակարանի առնչութեամբ նկատենք, որ ընդհանրապէս նկարազարդման ժամանակ ոսկու օգտագործումը կիրառական առումով բաւական բարդ աշխատանք էր, որը կարող էր իրականացնել միայն գործին տիրապետող արհեստավարժ վարպետը: Պակաս կարեւոր չէր ոսկու չափաւոր ու նուրբ տեղադրումը էջի մակերեսին, որպէսզի այն իր փայլով չխամրեցնէր միւս գոյները եւ ներդաշնակէր պատկերի ընդհանուր յօրինուածքին:

Յովհաննէս Սանդղկավանեցիի գրել ու պատկերազարդել է նաեւ հռչակաւոր «Մողնու Աւետարանը», իսկ 1060թ. նորոգել, լրացրել է մի անաւարտ ձեռագիր, որի յիշատակարանում գրում է. «զՅովհաննէս մեղաւոր եւ անարժան երէց եւ անպիտան գրիչ, որ զդեղագործն արար եւ կազմեաց, յիշենջիք» (Ե-ԺԲ, 101, այս եւ յաջորդ մէջբերումներում կատարուած ընդգծումները մերն են՝ Կ.Մ.): Դեղ-ներկ, գունաներկ բառից ծագող «դեղագործն անել» արտայայտութիւնն այստեղ ունի ծաղկելու, նկարազարդելու իմաստ: Այդ հաստատում է նաեւ 1195թ. մէկ այլ յիշատակարանով, ուր ծաղկող Գրիգորը նշում է ձեռագրի նկարազարդման պատուիրատու խաչիկին, «որ առիթ եղեւ դեղելոյս», իրեն էլ անուանում՝ «զԳրիգոր՝ դեղիչ սորա...» (Ե-ԺԲ, 283):

Յիշատակարանում միայն գրիչ է անուանւում Հռոմկլայում աշխատող Կոզման. «գրեցաւ ձեռամբ Կոզմաի, մեղաւորի եւ անարժան գրչի»: Բայց հետագայ շարադրանքում վարպետը յայտնում է՝ «բազում աշխատեցի եւ ծաղկերանգ եւ վարդափթիթ ոսկէհուռն զարդարեցի» (Ե-ԺԲ, 191), այսինքն՝ նաեւ ձեռագրի նկարիչն է:

Այսպիսով հնում ձեռագրի գրիչ եւ նկարիչ հասկացողութիւնները տարանջատուած չեն եղել: Գործին գիտակ գրիչը պէտք է կարողանար ձեւաւորել, ծաղկել, ակնահաճոյ դարձնել իր ստեղծած մատեանը: Նկատենք, որ Մեսրոպեան այբուբենի գեղակերպ ու ճկուն տառերի գրչութեանը տիրապետելը գրիչների համար մի շահեկան նախապայման էր, գծի ու գծանկարի հետ ազատ վարուելու հմտութիւն ստանալու առումով: Սակայն ինչ խօսք, որ

նկարչութիւնը, ոսկեզօծումը, կազմարարութիւնը նաեւ առանձին հնարքներ ու հմտութիւններ էին պահանջում, որը ձեռք էր բերւում մանրակրկիտ ուսումնառութեամբ: Այդ մասին է, օրինակ, Գրիգոր Ակոռեցի գրչի 1066թ. յիշատակարանը. «Ես, Գրիգոր, սիրեցի եւ քննող եղե արուեստի գրչութեանս, ցանգացա եւ ուսանել զգործ ոսկւոյ ի զարդ պատուիրանաց Տէառն եւ ի կազմած նորին...» (Ե-ԺԲ, 105):

Հայ մատենագիրների երկերում պատկերագործ, նկարիչ, նկարող բառերը գործածւում են դեռեւս 5-7-րդ դարերում: Զեռագրերի յիշատակարաններում նկարիչ բառին առաջին անգամ հանդիպում ենք 12-րդ դարի վերջին քառորդում: 1169թ. մի ձեռագրում նկարիչը որպէս «նկարագար-դելու» հոմանիշ օգտագործում է «ծրագրելը» (ծրել-գծել)՝ «ծրագրութիւն պատկերիս այս է...» (Ե-ԺԲ, 198): 1176թ. նկարիչ եւ կազմարար Աբրահամը յիշատակարանում խնդրում է յիշել իրեն՝ «աշխատողի նկարիս եւ կազմողիս» (Ե-ԺԲ, 220), իսկ 1181թ. Դրագարկում (Կիլիկիա) աշխատող Թորոս գրիչը յիշատակում է ծաղկողին՝ «գիտաշատուր սրբասէր քահանայ՝ նկարիչ ծաղկանց» (Ե-ԺԲ, 231):

Հայ մանրանկարչութեան ոսկեդարի՝ ԺԳ դարի յիշատակարանները նրկարիչների վերաբերեալ աւելի շատ նիւթ են պարունակում, այս շրջանի ձեռագրերը եւս անհամեմատ բազմաթիւ են: Երգնկայի մերձակայ Աւագ վանքում ստեղծագործող Սարգիս 1201թ. յիշատակարանում իրեն անուանում է «պատկերագրիչ» (ԺԳ, 18): Նոյն վանքում է ստեղծուել «Մշոյ ճառընտիրը», որի ծաղկող Ստեփանոսի անունը գրուած է մեծադիր մատեանի 452ա էջի մի զարդապատկերի մէջ: Չլինէր այդ մէկ հատիկ բառը, ոչ ոք չէր իմանայ շնորհալի զարդանկարչի անունը:

Անիի գրչատներում ձեռագրեր էին ստեղծւում ոչ միայն ստացողների նախնական պատուէրով, այլեւ վաճառքի համար: Քաղաքային կեանքի վերելքի պայմաններում մեծացել էր գրքի պահանջարկը: 1211թ. Անիի Բեխենց վանքում Սահակ Անեցու պատուէրով եւ նկարիչ Մարգարէի ձեռքով նկարագարողւած «Հաղբատի Աւետարանի» յիշատակարանները հիմնականում վերաբերում են ստացողին ու նրա տոհմին: Զեռագրին հետագայում հռչակ բերած արուեստագէտը յիշատակարանում գրում է. «Աստուած ողորմեա Մարգարէին՝ գրչի եւ նկարչի» (ԺԳ, 70): Անեցի նկարիչը Աւետարանի խորանների լուսանցքներում պատկերել է աշխարհիկ կեանքի գողտրիկ դրուագներ, իր համաքաղաքացիների դիմանկարներ, որոնցից մէկի մօտ գրել է. «Շերանիկ, քանի գաս, ձուկն բեր» (ԺԳ, 69): Ամէն ինչից դատելով, Անիի կենսայորդ միջավայրի հարազատ ծնունդն էր նկարիչը, իր վրձնած կերպարների՝ ձուկ բերող Շերանիկի, գինու գաւով մատուցակի, ծառի տակ նստած երաժշտի նման ազատ ու անկաշկանդ անեցի, որ յիշատակարանում ընդամենը խնդրում էր յիշել «աղքատ եւ մեղաւոր» (ԺԳ, 69) Մարգարէին: Հաւանաբար Անիում է ստեղծագործել նաեւ Աբաս անունով նկարիչը, որի մանրանկարներն աղերսներ ունեն Մարգարէի գործերի հետ: Յիշատակարանում իր մասին նշել է երեք լեզուով՝ հայերէն, յունարէն, վրացերէն. «Աբաս նկարիչ՝ տրուպ երեց» (ԺԳ 260):

Անիի մերձակայ Հոռոմոսի վանքում էին աշխատում վարպետ գրիչ-նկարիչներ Յովհաննէսը եւ Իգնատիոս Հոռոմոսցին: Վերջինիս ամենավաղ ձեռագրի (1214թ.) յիշատակարանում պատուիրատուները գրում են. Տուաք

գրել եւ նկարել իգնատիոս գրչի՝ ոսկւով եւ երանգ երանգ խառնուածով զարդարեալ» (ԺԳ, 83): Իգնատիոսի կարեւոր ստեղծագործութիւններից է 1232թ. «Քազնայրի Աւետարանը»՝ գրուած Զաքարեան իշխանների ազգական պատրոն Խոռասի ու նրա կնոջ՝ Զմրուխտ խաթունի պատուէրով: Զեռագրի խորաններից մէկի գլխազարդի մէջ նկարիչը գրել է. «Պատրոն Խառաս եւ զամուսին իւր Զմրուխտ խաթուն, որ զոսկին ետ գրոցս, ... յիշեալ» (ԺԳ, 180), այսինքն՝ Աւետարանի նկարազարդման համար անհրաժեշտ ոսկին նկարչին են տրամադրել պատուիրատուները: Այս արժէքաւոր մատեանը հետագայում գերեզմարուել է, ապա փրկագնուել եւ նորգուել անեցի Պարոնի նախաձեռնութեամբ՝ «ոսկւով եւ արծաթով...»:

Իգնատիոս Հոռոմոսցին գրած ու ծաղկած ձեռագրերի յիշատակարաններում իրեն մեծ մասամբ գրիչ է կոչում եւ հազուադէպ՝ նկարիչ: Անթուական յիշատակարաններից մէկում գրում է. «զիգնատիոս՝ մեղաւոր ոսկենկար սուրբ Աւետարանիս յիշեալ» (ԺԳ, 192): Ստացողներից մէկը Իգնատիոսի գրած ու պատկերազարդած մէկ այլ ձեռագրի մասին գրում է. «ստացայ... մատեանս զայս պայծառ նիւթով եւ գեղեցիկ գրով եւ ընտիր բանիւք, ցանկալի ամենայն տեսողաց» (ԺԳ 194): Որպէս ճանաչուած վարպետ Իգնատիոսը կատարել է ազնուականների, բարձրաստիճան հոգեւորականների, քաղաքացիների պատուէրներ, ստեղծել գեղագիր, ոսկեզարդ ու ոսկեկազմ մատեաններ: Շուտով սկսուել են մոնղոլական արշաւանքները, Անին ու ողջ երկիրն ասպատակութեան ու աւերի են ենթարկուել: Զգայուն հոգու տէր արուեստագէտը ծանր է տարել այդ դաժան իրողութիւնը: Նրանից յայտնի վերջին ձեռագրի յիշատակագրութիւններում զգացւում է ժամանակի խռովայոյզ շունչը. «Աստուած, ողորմեա իգնատիոս նկարչի, յորժամ գայցես ի սոսկալի աւուրն... Ո՛հ թաթար, վա՛յ աւուրն, որ եկիր անցուցիր զաշխարհս... Ո՛հ ներեցեր Աստուած անչափ արիւնահեղութիւն» (ԺԳ, 195): Այդ ձեռագրի խորաններում ամէնուր գերակշռում է կարմիր գոյնը, որը ժամանակի ահասարսափ տպաւորութիւնների արդիւնքը պէտք է համարել: Հետաքրքրական է՝ որ Արցախի Մեծշէն գիւղի բնակիչները (ձեռագիրը երկար ժամանակ այստեղ է պահուել), մատեանը կոչել են «կարմիր Աւետարան»:

Յիշատակարաններում տարբեր նկարիչներ տարբեր խօսքերով են ներկայացնում իրենց կատարած աշխատանքը: 1217թ. յիշւում են «զՍարգիս նկարիչն եւ զՍիքենոս շարայարողն, որ աշխատեցան ի յերանգ... եւ ի կազմն» (ԺԳ, 106): Մէկ այլ ձեռագրի նկարազարդման պակասը 1219թ. լրացրած Յովհաննէսը գրում է. «Ես՝ Յովհաննէս... լցի զպակասութիւն սորա բանիւք, ծաղկաւք եւ ցանգաւք եւ համաբարբառաւք, աղաչեմ... յիշեցէք զիս եւ ծնողքն իմ եւ գուսուցիչն իմ» (ԺԳ, 115): 1224թ. գրուած «Ճառընտիրի» յիշատակարանում նշւում են Վարդանն եւ Ղազար գրագիրը. «որ բազում ջանիւ եւ աշխատութեամբ զգիրքս ծաղկերանկ եւ գունակ գունակ դեղաւք զարդարեցին եւ պայծառագգեաց արարեալ փայլեցուցին ի տես աչաց... պայծառացուցին ծաղկաւք՝ իբրեւ զծաղկաւէտ երկիր» (ԺԳ, 141, 142): 1283թ. յիշատակ է հայցում ծաղկող Սուքիասը՝ գրելով. «ի ծաղիկ եւ ի գըլխագիր եւ ի կազմել աշխատեցայ» (ԺԳ, 539): Որպէսզի իր կատարած գործը սոսկ ընդօրինակութիւն չհամարուի, 1278թ. Մողնիում աշխատող մի նկարիչ գրում է. «նկարող ծաղկիս եւ յաւերինողս աղաչեմ յիշել» (ԺԳ, 478): Իսկ 1295թ. մի վարդապետ իրեն կոչում է «ձեռող խորանիս» (ԺԳ, 766):

Նշանաւոր «Թարգմանչաց Աւետարանում» Գրիգոր ծաղկողի թողած կարճ յիշատակագրութիւններուն կարգում ենք. «Թւիս ՈԶԱ (1232) ծաղկազարդեցաւ սուրբ Աւետարանս... Աստուած, ողորմեա Գրիգոր ծաղկողի...» (ԺԳ, 181): Իսկ ձեռագիրը ԺԴ-րդ դարում տէրունական նկարներով օժտած նկարիչը խնդրում է յիշել Գրիգոր նկարիչին (էջ 10): 1201թ. յիշում է Ղազար վարդապետը որպէս մի ձեռագիր «զարդարիչ» (ԺԳ, 17):

Որոշ յիշատակարաններ ընդհանուր պատկերացում են տալիս գրիչներին ու նկարիչների առօրեայ մասին, իրատեսօրէն բնութագրում նրանց: Միջնադարեան գրչի վերաբերեալ մեր ունեցած պատկերացումները յաճախ միակողմանի են՝ պարուրուած տխուր, ողբերգական երանգներով: Եւ սակայն, գրիչներն ու ծաղկողները սովորական մարդիկ էին իրենց տխրութիւններով ու ուրախութիւններով, առօրեայ հոգսերով ու յոյսերով: Նրանք կարող էին դժգոհել ոչ միայն թշնամու ասպատակութիւնից, այլեւ շատախօս զրուցակիցներից, գործին խանգարող ճանձ ու մոծակից, կարող էին ուրախանալ, երբ իրենց յիշում, միրգ ու այլ ուտեստ էին բերում, եւ այլն:

Գրիչներն ու ծաղկողները ոչ միայն տարեց ու ակերհեր այրեր, այլեւ պատանիներ ու երիտասարդներ էին: ԺԲ դարի մի գրիչ, որ յիշատակարանում անունը չի տալիս, գրում է. «Աղաչեմ... մեղադիր մի լինիք սխալանացս, զի չէի շատ գրել եւ էի երիտասարդ եւ անհաստատ» (Ե-ԺԲ, 320), ուրիշ երկուսը նշում են. «զվասակ բերկրելի պատանի, որ զծաղկագիրս ելից սուտ դեղաւք... յիշեսլիք» (ԺԳ, 819), «զԱկորս... յիշեցէք, զի կարի շատ աշխատեցայ, զի ի տղայութեան ժամն գրեցի» (ԺԳ, 911): Նորուսում էր նաեւ Անանիա դպիրը. «Ես՝ Անանիայ դպիրս... ծաղկեցի գսուրբ Աւետարանս... եւ առաջին ծաղիկս այս էր, որ ուսայ ի վարդապետէն իմոյ» (ԺԳ, 874): Մէկ ուրիշն էլ, ի տարբերութիւն Անանիայի, ներողամտութիւն է հայցում ինքնուս լինելու համար. «Ով եղբարք, մեղադիր մի լինիք փոքր ծաղկիս, զի ի վարդապետէ չէի ուսել...» (ԺԵ.Բ, 158):

Գրչութիւնը, մանրանկարչութիւնը, ձեռագիր ստեղծելը դիւրին գործ չէր անգամ օժտուած եւ ուշին երիտասարդների համար: «Դժուար է խիստ, այսչափ կարացի բազում աշխատութեամբ, մի մեղադրեք: Զեզ տացէ Աստուած զստոյգն իմանալ» (ԺԳ, 555): 1284թ. գրուած այս տողերի հեղինակն այլ ոք չէ, քան «երկրորդ Աթենք» յորջորջուած Գլաձորի համալսարանի ապագայ հռչակաւոր ուսուցչապետ Եսայի Նչեցին:

Երբեմն գրչի, նկարչի աշխատանքին խանգարում էր շրջապատի աղմուկը, գիշերամուտին դժուարութեամբ էր յաղթահարուած քունը: Մողնեցի Սիմէոնին անհանգստացնում էին փոքրահասակ որդիները՝ «Աւաղ տղայոցս բարբաջմանս եւ իմոյ մտացս սխալելոյ» (ԺԳ, 477), բայց նաեւ քունն էր նեղում. «քունս նեղեաց, եւ թող այն մարդն մեղադրէ, որ քունն չունի» (ԺԳ, 478): Կարփիում աշխատող Մկրտիչը գոհ չէ «չատախօս» զրուցակիցներից. «Ի բազմութիւն խաւսից սխալեցաւ միտս եւ կրկնեցի զգրելսն, աւաղ մթացեալ մտացս...» ԺԳ, 480): «Վայ, որ զրոյցն զիս կու խափանէ ի գրելոյն» (ԺԵ-Բ, 371), խոստովանում է մէկ այլ գրիչ: Աւելի հեշտ չէր 1269թ. Երզնկայում աշխատող Մովսէսի համար, որը գրում է. «Անիծէ Աստուած զճանճն եւ ընդ նմին զլոյն, զի յոյժ կծեն զիս, այլ եւ տաւթ աւուրս տագնապեն զիս» (ԺԳ, 377): Նոյն մտածումներն է ունեցել 1194թ. Նեզկուկ գիւղում ձեռագիր գրած Ստեփանոսը, բայց նա մխիթարուել է իր կատարած գործով:

«Ո՛հ, որ քունն նեղէր,
Ճանջն տանջեր, լուսն խորովէր,
Գիրն աւիրէր, սիրտս ցաւէր,
Հազար ու մի վնաս լինէր.
Եւ Ո՛հ, որ մխիթարէր» (Ե-ԺԲ, 279):

Գրիչներն ու ծաղկողները երախտագիտութեամբ են յիշում ոչ միայն իրենց պատուիրատուներին, ուսուցիչներին, գործըկերներին կամ նիւթեր հայթայթողին, այլեւ իրենց նկատմամբ առաջին հայեացքից փոքր թուացող խնամք ու հոգատարութիւն ցուցաբերողներին՝ «որք առ մեզ սէր ցուցուցին... որք մի օր կերակրեցին կամ բաժակաւ ջուր արբուցին...» (ԺԴ, 310): 1288թ. Յովհաննավանքում աշխատող Կարապետը խնդրում է յիշել Գրիգորին, որ «զվաղահաս ծիրանն էր» (ԺԳ, 613), նոյն վանքի մէկ այլ միաբան գրում է. «Ո՛ր գեղեցիկ խնձորիս, զոր էրեր եղբայր Մարտիրոս» (ԺԳ, 734): Նմանօրինակ երկու վկայութիւն եւս. «Եղիսաբեթն ծաղկած կենա, որ էրեր մին քրեղէն բանջար, երեք լաւն ի վերա» (ԺԵ.Գ, 290), «Գրիգոր Առնջեցի յիշեցէք... որ յայսմ առուր մեզ վարդ երեր փիլոնաւն ի լի» (ԺԵ.Բ. 323): Որքան անմիջական, անկեղծ ու ազնիւ են այս տողերը, եւ ինչքան քիչ բան էր հարկաւոր գրչի հրճուանքն ու երախտագիտութիւնը յարուցելու համար, անգամ պարզապէս «գեղեցիկ խնձոր» կամ «փիլոնով վարդ»:

Գրչի ու նկարչի աշխատանքի կարեւոր նախապայմաններից էին անսըխալ նախօրինակ, լաւ գրանիւթ ու գործիք ունենալը: Նախօրինակը, որից գրիչն ու մանրանկարիչն ընդօրինակում էին, երբեմն հին ու քայքայուած էր լինում. «Աւրինակս եղծած է, փտեալ մագաղաթ է եւ ոչ կարեմ վերծանել» (Ե-ԺԲ, 333): 1292թ. իր ձեռքին եղած նախօրինակից դժգոհում էր նաեւ Մարգարեկ գրիչը՝ «Կարի վատ գիր էր ու սղալ աւրինակս եւ ես կու վշտանաի... մահն շատ հեշտ էր ինձ, քան զայս դիմիս գրել: Մեղա քեզ, եղբայր, թողութիւն արա» (ԺԳ, 690): Իսկ Գետկա վանքում ստեղծագործող Մխիթարը հիացած էր նախօրինակով, որ նշանաւոր Գրիգոր Մուրղանեցու ձեռքով էր գրուած՝ «Աստուած ողորմի աւրինակիս գրաւղին, հրաշափառ է...» (ԺԳ, 400):

Ընդօրինակողները երբեմն նշում են, որ ոչ միայն բնագիրն են արտագրել, այլեւ պատկերներն արտանկարել: Յովհաննէս անունով մի ծաղկող յիշատակարանում նախ գրում է. «Անմեղադիր լեռուք խոշորութեան եւ անարհեստութեան ծաղկիս, զի անվարպետ էի», ապա աւելցնում, որ Կիլիկիայի Սիս մայրաքաղաքում ստեղծուած մատեանից է ընդօրինակուած բնագիրն ու նկարագրողումը՝ «Եւ է ի Սսիցի աւրինակէ գիրս եւ ծաղիկս...» (ԺԴ, 650):

Յիշատակարաններում նշում են ինչպէս գրչութեան, այնպէս էլ նկարչութեան ուսուցիչներ: 1447թ. Անանիա ծաղկողը գրում է. «Զուսուցիչն իմ եւ հոգեւոր հայրն զտէր Սիմէոն արհեսպիսկոպոս յիշեսջիք, որ բազում աշխատութեամբ վարժեցուց զիս յարուեստ ծաղկաւղութեան» (ԺԵ.Ա, 616):

Միջնադարեան գրիչներն ու ծաղկողները իրենց անուններին ինքնախարազանման զանազան ածականներ են աւելացնում (անարժան, մեղաւոր եւ այլն): Դրա պատճառն այն է, որ նրանք իրենց անունները գրում էին Սուրբ Գրքի էջերում, ուր պաշտելի Աստուծոյ կեանքը, գործն ու վարդապետութիւնն էր ներկայացուած, ուստի մարդ մահկանացուի անուան յիշատակութիւնը յանդգնութիւն ու մեղք էին համարում: Այսինքն՝ ինքնադատա-

պարտման պիտակներն օգտագործելը ոչ թէ միայն համեստութեան արտայայտութիւն էր, այլ նաեւ հաւատացեալ ու բարեպաշտ գրչի բնական վարքագիծ։ Նկատենք սակայն, որ մեր վարպետներն այս հարցում հանդէս են բերել զարմանալի «պերճախօսութիւն»։ Ահաւասիկ 10–15–րդ դարերի յիշատակարաններից քաղուած այդօրինակ արտայայտութիւնների մի շարք. անարժան, անարհեստ, անվարժ, նուաստ, ապիկար, տգէտ, տրուպ, անպիտան, անիմաստ, տխմար, եղկելի, սուտանուն, ողորմելի, գարշ, խաբեբայ, ետին, փցուն, փանաքիմաց, յանցաւոր, խելագար, ծոյլ, տարտամ եւ այլն։ Իսկ միայն «մեղք» հասկացողութեան հետ կապուած՝ մեղաւոր, յոգնամեղ, մեղուցեալ, մեղսամած, մեղսասէր, բազմամեղ, մեղսամակարդ, վիրաւոր մեղօք, ամենամեղ, ծով ամենայն մեղաց, վերջացեալ մեղօք եւ այլն։ Մի գրիչ, որի անունը խունկ է, այսպէս է փնտվում իրեն. «Ես անարժան եւ անպիտան՝ անուամբ խունկ կոչեցեալ, բայց ի վարս եւ ի հոտս եւ ի համս դառն եւ անարգ» (ԺԵԳ, 53)։ Նկարիչ Ալինախ եպիսկոպոսն իրեն կոչում է «ծաղկողիկ» (ԺԴ, 464, 492), իսկ գրիչ Վարդանը փորձում է գերազանցել բոլորին. «Ձիք մարդ մեղաւոր քան զիս» (Ե–ԺԲ, 234)։

Հայ մանրանկարչութեան Կիլիկիայի դպրոցը բազմաթիւ տաղանդաւոր արուեստագէտներ է տուել մեր մշակոյթին, բայց, ցաւօք, բոլորի անունները չէ, որ յայտնի են։ Օրինակ, գրքային գեղանկարչութեան այնպիսի մի գլուխգործոց, ինչպիսին «Հեթումի ճաշոցն» է (1286), չունի նկարչի յիշատակարան։

Շքեղագարդ մատեաններն ընդհանրապէս շատ յարգի էին Կիլիկիայի հայոց արքունիքում։ Ձեռագրեր էին պատուիրում թագաւորները, թագուհիները, արքայազները, սպարապետները, բարձրաստիճան ազնուականները։ Հեթում Ա թագաւորի եղբայրը Սմբատ գունդստապլը (սպարապետ) իր պատուիրած մատեանի՝ յիշատակարանում իր իսկ ձեռքով գրել է. «Ձմեղաւոր հոդս՝ ըզՍմբատ Հայոց սպարապետս յիշեսլիք» (ԺԳ, 230)։ Ինչպէս տեսնում ենք, հռչակաւոր զօրապետի յիշատակարանի ոճը չի տարբերում ամենասովորական գրչի յիշատակ հայցող գրութիւնից։

Աշխարհական իշխանաւորներից ետ չէին մնում երկրի հոգեւոր տէրերը, որոնց հովանաւորութեամբ է ստեղծագործել Կիլիկիայի հայ նկարիչների մեծ մասը։ Յիշատակելի են յատկապէս Կոստանդին Ա Կաթողիկոսը եւ գրչութեան արուեստին քաջհմուտ եպիսկոպոս Յովհաննէս Արքայեղբայրը։

Ծանօթանանք այս շրջանի որոշ յիշատակարանների. 1255թ. մի Շարակնոցի ծաղկող գրում է. «... զանարժան եւ զմեղաւոր հոդս, Սարգիս քահանայս, զծաղկաւղ եւ զոսկաւղ այսմ տառիս, աղաչեմ յիշել» (ԺԳ, 283)։ 1263թ. Սկեւռայում յիշում է Օգսենդ անունով ոսկողը (ԺԳ, 324), իսկ 1312թ. Ականց անապատում մի Շարակնոց խազագրած ու ծաղկած Գրիգոր դպիրը գրում է. «Ձգիրս խազեցի եւ զարդարեցի ոսկով եւ ծաղկիւ» (ԺԴ, 88)։ Նկատենք, որ ոսկու օգտագործման շեշտումը (թէ այս, թէ բազմաթիւ այլ յիշատակարաններում) սոսկ մետաղի թանկարժէքութեան պատճառով չէր արւում։ Ահա, օրինակ, Ոսկեփորիկ բառը մեկնելիս ոսկու մասին ինչ է գրում Ս. Գրիգոր Տաթեւացին. «Ոսկեփորիկ՝ ... ըստ իրեն եւ զանունն եղեալ ունի ոսկի, այսինքն՝ անապական եւ պատուական գանձիւք աստուածային առլըցեալ...» (ԺԵԱ, 10)։

1263թ. Գռներում աշխատող Կոստանդինը նկարիչ բառի փոխարէն

օգտագործում է նկարագրիչը՝ «Ձմեղապարտ եւ զանարժան նկարագրչիս զԿոստանդին... աղաչեմ յիշել» (ԺԳ, 323): Կիլիկիայում գրչութեան եւ մանրանկարչութեան արուեստն այնքան էր զարգացել, որ երբեմն առանձին արուեստագէտներ էին զբաղւում ոչ միայն գրչութեամբ, նկարչութեամբ, կազմարարութեամբ, այլեւ այս գործերի առանձին մանրամասներով: 1271թ. Դրազարկում Կոստանդին գրչի գրած եւ Առաքել Հնազանդենցի կազմած ձեռագիրը ծաղկել է Գրիգոր քահանան, իսկ վարպետ գրիչ Աւետիսը գրել է գլխագրերը՝ «աղաչեմ յիշել... զԳրիգոր նորընծա քահանա, որ ծաղկազարդեաց զսա եւ զընտիր գրչաւորն զԱւետիս, որ գլխագրեաց զսա...» (ԺԳ, 407):

Իսկ յիշատակարաններում ի՞նչ է իր մասին գրում հանրաճանաչ Թորոս Ռօսլինը: Նրանից յայտնի առաջին ձեռագրում, որ ստեղծուել է 1256թ. Կոստանդին կաթողիկոսի պատուէրով, պահպանուել է ընդարձակ գլխաւոր յիշատակարանը եւ մի քանի յիշատակագրութիւններ՝ խորաններում: Ռօսլինը նշում է, որ պատուիրատուի համար դժուար չէր «ի լաւաց գրչաց կամ ի հմուտ արհեստագիտաց... ստանալ» մատեանը, բայց հրամայել է իրեն՝ «իմոյ անարժանութեան փցուն եւ ախմար գրչի Թորոսի մականունն Ռաւսլին կոչեցելոյ ըստ նախնեաց... զգործի գրչութեան ի կիր արկանել... այս մատեան, որ եւ զարդարեալ ոսկով զտով եւ պատուական նիւթիւք, ներքոյ եւ արտաքոյ, ըստ առատապարգեւ կամաց իւրոց...» (ԺԳ, 285): Ուշագրաւ է, որ նկարիչը կիրառում է «արհեստագէտ» բառը որպէս մեր գործածած «արուեստագէտի» համարժէք: Յիշատակարանից երեւում է, որ Թորոս Ռօսլինը ոչ միայն գրել ու պատկերազարդել, այլեւ կազմի վրայ է աշխատել, «ներսից ու դրսից» զարդարել մատեանն ընտիր նիւթերով ու ոսկով:

Ռօսլինեան յաջորդ Աւետարանը (1260) գրուած է Հռոմկլայում, դարձեալ Կոստանդին կաթողիկոսի պատուէրով «... առատաձեռն ծախիւք, նիւթաւք եւ երփն երփն գունաւք...» (ԺԳ, 301): 1262թ. Ռօսլինը Հռոմկլայում Աւետարան է ընդօրինակել Կոստանդին կաթողիկոսի եղբորորդի Թորոսի համար: Արուեստագէտը մատեանը զարդարել է. «ոսկով սրբով եւ երանգ երանգ գունովք, ներքոյ եւ արտաքոյ՝ ընդելուզեալ քարամբք պատուական(օ)ք...» (ԺԳ, 316): Հետաքրքիր է, որ ձեռագրում պահպանուել է նաեւ յայտնի կազմարար Առաքել Հնազանդենցի նոյն թուականին գրուած յիշատակարանը: Ուրեմն ինչպէս հասկանալ Ռօսլինի խօսքը, թէ մատեանն ինքը զարդարել է նաեւ «արտաքոյ՝ ընդելուզեալ քարամբք պատուական(օ)ք»: Ըստ երեւոյթին, տաղանդաւոր նկարիչը կատարել է ձեւաւորողի (տիզայնըր) դեր, կազմի վրայ նախանշել թանկագին քարերի տեղադրման եւ միւս զարդերի ընդհանուր յօրինուածքը, որի հիման վրայ կազմարար վարպետ Առաքելը կատարել է իր գործը:

Նոյն 1262թ. Հռոմկլայում Ռօսլինը շքեղօրէն պատկերազարդել է Հեթում Ա Թագաւորի որդի Լեւոնի համար Աւետիս գրչի ընդօրինակած Աւետարանը: Այս մատեանի կազմարարը դարձեալ Առաքել Հնազանդենցն է, բայց ցաւօք, ճանաչուած վարպետի պատրաստած կազմերից ոչ մէկը մեր օրերը չի հասել...

1265թ. Թորոս Ռօսլինը գրել ու նկարազարդել է մէկ այլ Աւետարան «հրամանաւ եւ ծախիւք մեծագգի եւ բարեպաշտուհի տիկնոջն տիկին Կեռանի», այն զարդարել «զանազան նիւթաւք, ընտրելագոյն ոսկով եւ երանգ երանգ գունով» (ԺԳ, 330):

1266թ. մեծանուն վարպետն աշխատել է երկու ձեռագրի վրայ, որոնցից մէկի պատուիրատուն Հեթում Ա. Թագաւորն է: Ձեռագիրը դառն ճակատագիր է ունեցել, ժամանակի ընթացքում փոխանցուել է սերնդից սերունդ, բայց բզկտուել ու դաշունահար է եղել բարբարոսների ձեռքով: Մեր օրերն են հասել նախկին փառաւոր մատեանի 39 թերթեր եւ յիշատակարանի մի մասը, ուր թէպէտ նկարչի անունը չկայ, սակայն մասնագէտների կարծիքով անկասկած Ռոսլինի ձեռքի գործն է՝ զարդարուած «ծաղկերանգ բազմակերպ պատկերազրութեամբ» (ԺԳ, 334):

Միւս ձեռագիրը Վարդան եպիսկոպոսի պատուէրով ընդօրինակել է Աւետիս գրիչը, որից յետոյ այն տուել են «վայելչացուցանել... ոսկւով եւ զանազան նիւթով բազմամեղ գրչին Թորոսի» (ԺԳ, 336): Յիշատակազրութիւններից մէկուն արուեստագէտը գրում է. «Նկարողի սորա թողութիւն խնդրեցէք» (ԺԳ, 337): Թէեւ Ռոսլինի նախորդ յիշատակարաններից նոյնպէս ակնյայտօրէն երեւում է նրա նկարիչ լինելը, բայց այստեղ առաջին անգամ է գործածում «Նկարող» բառը: Դրա փոխարէն յիշատակարաններում ամէնուր իր մասնագիտութիւնն ու կոչումը ընդրոշում է «գրիչ» բառով:

Թորոս Ռոսլինի մեզ հասած վերջին մատեանը գրուել է 1268թ. Հոռմ-կլայում, Լեւոն Գ-ի որդի Հեթում արքայորդու համար: Յիշատակարանում նկարիչը գրում է. «Զբազմամեղ գրիչս աղաչեմ յիշել՝ զանարժանութիւն իմ, եւ զծնաւղս, եւ զորդիս իմ, եւ զուսուցիչս, եւ զամենայն երախտագործս իմ...» (ԺԳ, 360): Հենց այս խօսքերն էլ կիլիկեցի հանճարեղ հայորդու պատգամը համարենք, յիշենք նրան, իր ծնողներին ու որդուն, հոգեւոր հովանի ուսուցչին եւ իրենց բարութիւն արած «զամենայն երախտագործս», քանզի նրանց յիշատակի գրաւականը հենց Թորոսի հրաշալի մատեաններն են, ռոսլինեան փառաշուք ու հոգեպարար արուեստը:

Կիլիկիայում ապրել ու ստեղծագործել են նաեւ այլ շնորհաշատ արուեստագէտներ: Յաւօք, յիշատակարանի բացակայութեան պատճառով, չգիտենք, թէ ովքեր են այսպէս կոչուած «Ութ նկարիչների Աւետարանի» մանրանկարների վարպետները, մի ձեռագիր, որ ասես գրքարուեստի կատարելութեան իւրօրինակ մրցասպարէզ է դարձել 13-րդ դարի վերջերին կիլիկեցի լաւագոյն նկարիչների համար: Իհարկէ «ութ նկարիչներ» ասածը պայմանական է, մասնագէտների համոզմամբ 2-3 արուեստագէտներ են պատկերազարդել մատեանը, որն ինչ-ինչ պատճառներով անաւարտ է մնացել, իսկ 1320թ. լրացուել ու ամբողջացուել Սարգիս Պիծակի ձեռքով: Վերջինս որդին էր նկարիչ Գրիգոր Պիծակի, որն առաջին անգամ յիշատակում է 1286թ. Ստեփանոս Վահկացու հետ՝ «զՍտեփանոս Վահկացի եւ գրիգոր մականուն Պիծակ՝ զնկարողք...» (ԺԳ, 592): Որդին հօր գործի արժանաւոր ժառանգորդն էր, պատահական չէ, որ կրում էր նաեւ նրա Պիծակ մականունը:

Սարգիսը սկզբում աշխատում էր հօր արուեստանոցում, հետագայում բազմաթիւ շքեղ մատեաններ է ծաղկել Սսում, Դրազարկում, Սկեւռայում, Փոս անապատում: Նա հռչակուած էր ոչ միայն կիլիկիայում, այլեւ բուն Հայաստանում ու Փոքր Հայքում: «Ութ նկարիչների Աւետարանը» Սարգիս Պիծակին լրացնելու է տուել Սեբաստիայի եպիսկոպոս Ստեփանոսը: Նա իր գրած տեղեկաշատ յիշատակարանում պատմում է, որ Կիլիկիայի Օշին արքան կամեցել է իրեն պարգեւ տալ, եւ հրամայել որ մտնի պալատի պահոցը, ուր սուրբ կտակարաններն են: Այնտեղ նա տեսել է բազում ու զանազան գրքեր,

բայց ցանկացել է միայն դրանից մէկն ունենալ, որ գրուած էր վարժ ու գեղեցկագիր գրչի ձեռքով եւ զարդարուած բազմերանգ պատկերներով յոգնահանճար նկարակերտի կողմից, բայց աւարտին չէր հասցուած, քանզի տնօրինական պատկերների մի մասը նկարուած էին, մի մասը՝ ուրուագծուած, եւ շատ տեղեր ալ ազատ էին թողնուած: Ուրախութեամբ վերցնելով այս գիրքը փնտռել է մի վարպետ նկարչի եւ գտել Պիծակ մականունով Սարգիս սրբասէր քահանային՝ «յոյժ հմուտ նկարագարողութեան»: Նա յանձն առնելով բազում աշխատութեամբ լրացրել է ոսկենկար պատկերների պակասը (ԺԴ, 162): Հետաքրքիր է, որ յիշատակարանի վերջում նշուած է ոչ միայն Սարգիսը, այլեւ մատեանի գրչին ու ծաղկողը, թէեւ նրանց անունները ստացողին յայտնի չեն եղել. «Եւ առաւել յիշեսցիք զառաջին աշխատողս՝ զգծաւղին եւ զծաղկաւն, եւ զվերջին աշխատողս՝ զՍարգիս...» (ԺԴ, 163):

Սարգիս Պիծակը բազմաթիւ ալ մատեաններ է գրել ու պատկերագարողել, ապրել է մինչեւ խոր ծերութիւն: 1353թ. մի Աւետարանի չափածոյ յիշատակարանում գրում է:

«Կատարեցաւ սա ի կարգի,
Ձեռամբ Սարգիս քահանայի...
Եւ ծայր ի ծայր զարդարեցի,
Ոսկով, ծաղկիւ, զամենն ի լի,
Եւ պատկերնով նորէ ի գրի...
Ի ծերութեան ժամանակի

Աշխատութեամբ յաւարտ ածի» (ԺԴ, 403):

Սարգիս Պիծակից յետոյ Կիլիկիայի հայ մանրանկարչութեան դպրոցն այլեւս վառ անհատականութիւններ չտուեց:

Դեռեւս ԺԳ դարի վերջերին ու հիմնականում ԺԴ դարի առաջին կէսին հայ մշակոյթի երկնակամարում փայլատակեց մի նոր փառաւոր կենտրոն՝ Գլաձորի համալսարանը: Նրա առաջին սաների թւում քիչ չէին Կիլիկիայից եկածները, ինչպէս Մատթէոս Կիլիկեցին, Պօղոսը, Վարդանը, Տիրատուրը: Նրանցից ոմանք հասուն այրեր էին եւ համալսարան բերեցին նաեւ կիլիկեան մանրանկարչութեան աւանդները: 1314թ. գրուած մի ձեռագրի յիշատակարանում Պօղոս Կիլիկեցին նշում է, որ Ակների վանքից «յաղագս փափագման իմաստասիրական արհեստից» եկել է Գլաձոր, ուսանել Եսայի Նշեցու մօտ: Մատեանը գրել ու զարդարել է «յընդիր ընդիր երանգոց եւ ի յոսկւոյ սրբոյ» Տարսայիճ Օրբէլեան իշխանի պատուէրով (ԺԴ, 99):

Գլաձորի համալսարանի մասին առաջին տեղեկութիւնը պահպանուել է Մատթէոս Կիլիկեցու 1284թ. չափածոյ յիշատակարանում, ուր նշում է, որ հեղինակը Մլիհի վանքից եկել է Վայոց ձոր, Աղբերց վանք (Գլաձոր) Ներսէս Մշեցի հռչակաւոր ուսուցչապետին աշակերտելու համար:

Այս նշանաւոր ձեռագրի խորաններում առաջին անգամ հանդիպում ենք մեր միջնադարեան բազմաշնորհ արուեստագէտներից մէկին՝ Մովսիկի անուանը. «զՄովսիկ նկարիչ խորանիս յիշեցէք, աղաչեմ» (ԺԳ, 553):

Գրիչ, նկարիչ, ճարտարապետ եւ քանդակագործ Մովսիկի միւս յիշատակարաններում ասես ուրուագծւում է արուեստագէտի յուզառատ կերպարը: 1302թ. նա գրում է. «Աղաչեմ... յիշել զանիմաստ նկարողս Մովսիկ եւ սխալանացն անմեղադիր լինել, զի թէպէտ անհմուտ էի, այլ ժամանակս ձմեռն էր, եւ տունս՝ նսեմ...» (ԺԴ, 9): Մովսիկի այս շքեղ մատեանը, որ ստեղծուել էր

Սիւնիքի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբէլեան պատմիչի պատուէրով, հետագայում նորոգուել է Գրիգոր Խլաթեցու ձեռքով Արծկէի Պատերազմի Սուրբ Նշան վանքում, իսկ աւելի ուշ շրջանի յիշատակարաններում ստացել է «Պատերազմի Աւետարան» անունը:

1292թ. Նորավանքում ընդօրինակած ու ծաղկած Աւետարանի յիշատակարանում Մոմիկն իրեն կոչում է «անարհեստ՝ ի գրչաց», որը մատենի էջերին «գրոշմել» է «գգիծ եւ գնկար»: Շարադրանքի վերջում խնդրում է «սղալանաց եւ խոշորութեանն անմեղադիր լինել, զի բեկ սրտիւ եւ թախանձեալ մարմնով գրեցաւ» (ԺԳ, 677, 679): Մատենը ստացողներ Յովհաննէս եւ Թադէոս եղբայրներն էլ իրենց հերթին յիշատակարանում վարպետին մեծարում են «բազմիմաստ եւ հանճարեղ՝ յարուեստ գրչի եւ նկարագրութեան» խօսքերով, որ Մոմիկի վաստակի ճշմարիտ գնահատականն է: Յիշատակարաններից տեղեկանում ենք նաեւ, որ շնորհաշատ Մոմիկն ինչ-որ ժամանակ կուրացել է եւ չի կարողացել ստեղծագործել, բայց մի քանի տարի անց վերագտել է տեսողութիւնն ու շարունակել աշխատել:

Գլաձորի եւ ընդհանրապէս հայ մանրանկարչութեան երեւելի դէմքերից է Թորոս Տարօնացին: Դեռեւս Մուշում 1311թ. նկարազարդած ձեռագրում (Մատ. 10,859) որոշ մակագրութիւններում «Գրեալ Թորոս սարկաւազ» է տէրունականների վերջում՝ «Թորոս սարկաւազ գնկարող սուրբ պատկերացս»: 1323թ. համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցու համար պատկերազարդած Աւետարանի յիշատակարանում նա գրում է. «... զանարժան Թորոս ի Տարօնոյ, ի քաղաքէ Մշոյ... յիշեցէք ի Տէր..., որ բազում աշխատեցաւ ի խորան, ի ծաղիկ, ի գլխագիր» (ԺԴ, 183): Մէկ այլ յիշատակարանում նկարիչը յայտնում է, որ Եսայի Նչեցու հովանաւորութեամբ տեւական ժամանակ աշխատել է «ի գիր եւ ծաղիկ» (ԺԴ, 215): 1332թ. նկարազարդած Աստուածաշունչի յիշատակարանում վարպետը մանրամասներ է յայտնում իր ծագման մասին՝ «յիշեալ... զԹորոս ծաղկող, եւ զպապն իմ Սիար, եւ զհայրն իմ Սարգիս, եւ զմայրն իմ Մարիամ ի քաղաքէն Մշոյ» (ԺԴ, 247):

ԺԴ-ԺԵ դարերում հայկական պետականութեան անկման եւ քաղաքական չափազանց ծանր պայմանների հետեւանքով հայութեան հոծ զանգուածներ արտագաղթի ուղին բռնեցին: Բայց ուր էլ որ ոտք էին դնում նրանք, հիմնում էին վանքեր, եկեղեցիներ, դպրոցներ, ստեղծում ձեռագիր մատենաներ: Որպէսզի պարզ դառնայ, թէ այս շրջանում գաղութաբնակ հայերի համար որքան կենսական էր գիրք գրելու, գիրք ունենալու պահանջը, նշենք, որ միայն 14-րդ դարում հայերէն ձեռագիր են գրուել իտալիայի Հռոմ, Ջենովա, Բոլոնիա, Սալեռնո, Պերուջա, Պիզա քաղաքներում, Լոմբարդիա երկրամասում: Դա մի ժամանակաշրջան էր, որ համաշխարհային մշակոյթի պատմութեան մէջ յայտնի է Վաղ Վերածնունդ (պրոտոռենեսանս) անուամբ, եւ ինչպէս տեսնում ենք, մտաւորական հայութիւնն այդ դարաշրջանում ստուար թիւ էր կազմում իտալիայում: Տեղի հայերն ունէին նաեւ իրենց եպիսկոպոսները: Նրանցից թովմասը 1311թ. Վենետիկից մի ձեռագրի համար անհրաժեշտ ընտիր մագաղաթ է ուղարկել Կիլիկիա, Կոստանդին Գ Կաթողիկոսին (ԺԴ, 78):

Մեծաթիւ մատենաներ են գրուել ու պատկերազարդուել տնտեսական ու մշակութային ծաղկում ապրող «Ծովային Հայաստանում»՝ Ղրիմի հայ գաղթավայրում: 1364թ. բազմարդիւն գրիչ նատերի որդի Աւետիսը, Սուր-

խաթում նկարագրողելով նոր ընդօրինակուած Աւետարանը, յիշատակարանում գրում է. «Ով ընթերցող... յիշեայ զբազմամեղ Աւետիս՝ զնկարող եւ զսանտրող այսմ, եւ խոշորութեան արուեստին մի՛ մեղադրէք...» (ԺԴ, 348): Յիշատակարանում ուշագրաւ է «սանտրող» բառի գործածութիւնը, որ այստեղ թերեւս յարգարելու, նաեւ՝ սրբագրելու իմաստ ունի: Ինչ վերաբերում է «խոշորութիւն» բառին, ապա թէ այս, թէ բազմաթիւ այլ յիշատակարաններում այն օգտագործւում է անկանոնութեան, անհամաչափութեան նշանակութեամբ: Աւետիսն ու Նատերի միւս որդիները շատ ուրիշ մատեաններ են ստեղծել:

Նոր ժամանակների հանճարեղ նկարիչ Յովհաննէս Այվազովսկու ծննդավայր թէոդոսիայում, որ հնում կաֆա էր կոչւում, 1401թ. ձեռագիր է ծաղկել մէկ այլ Յովհաննէս՝ «... մի՛ մոռանայք յիշել եւ զՅովհաննէս քահանայն... որ ոսկով զարդարեաց ծաղկելով» (ԺԵԱ, 20):

Պարսկաստանի Սուլթանիա քաղաքում էր հաստատուել բազմերախտ գրիչ, նկարիչ եւ կազմարար Մխիթար Անեցին: 1338թ. հայրենի Անիի կարօտը սրտում նա գրում է.

«Հասրաթ (փափագ) ունիմ ի յիմ սրտիս,
Միշտ տագնապիմ վասն այս բանիս,
Որ մինչ հոգիս է ի մարմնիս,
Ես տեսանեմ զթամամ գլորիս,
Ոսկով զուգած այս խորանիս,
Եւ զանազան այս ծաղկընիս...
Յիշեմ գաւառն իմ հայրենին,
Զմայրաքաղաք ամուրն Անին...» (ԺԴ, 307, 310):

Գաղութաբնակ հայութիւնը հետագայում մեծ մասամբ տարալուծուեց, ձուլուեց այլ ժողովուրդների հետ (յատկապէս քրիստոնէական երկրներում), բայց նրա ստեղծած մշակութային հարուստ ժառանգութիւնը կարեւոր տեղ է գրաւում մեր մշակոյթի պատմութեան մէջ:

Զնայած օտար տիրապետութեանը, կրօնական ու հարկային բիրտ ճնշումներին, մշակութային ընթացքը երբեք կանգ չառաւ Հայաստան՝ աշխարհում: 14–15–րդ դդ. բազմաթիւ գրչատներ էին գործում Այրարատում, Վասպուրականում, Սիւնիքում, Արցախում:

1304թ. Արագածոտնի Վժանի վանքում (այժմ՝ Ուջան) մի Աւետարանի զարդանկարներն ու աւետարանիչների պատկերները ստեղծած Բարդաօլիմէ (Բարդողիմէոս) անունով մէկը գրում է. «Զծաղկող եւ զնկարիչ սուրբ աւետարանչացս, զանպիտան Բարդաօլիմէ յիշեցէք ի բարին...» (ԺԴ, 29): Այս յիշատակարանի առնչութեամբ նկատենք, որ ծաղկել եւ նկարել հասկացողութիւնները թէեւ միշտ չեն սահմանազատուում, բայց ծաղկելն աւելի յաճախ օգտագործւում է զարդանկարչութիւնը բնորոշելու համար, իսկ նկարելը՝ տէրունական ու աւետարանիչների պատկերների առկայութիւնը նշելու համար: Հենց այդ նկատի ունի նաեւ մէկ այլ յիշատակարանի հեղինակ Ստեփանոսը, երբ գրում է. «Ծաղկեցի եւ նկարեցի եւ կազմեցի...» (ԺԵԲ, 120): Իսկ 1432թ. Ամիթում աշխատող Աբրահամը ձեռագիրը զարդարել է «ծաղկով եւ ամենայն տնաւրինականաւ» (ԺԵԱ, 416): Կիլիկիայի Կոստանդին թագաւորի (1344–1363) ստացած մի ձեռագրի յիշատակարանում նշւում է. «Ծաղկեալ գեղեցիկ կերպարանաւ» (ԺԴ, 343): Նպատակը նոյնն է, որպէսզի «ծաղկ-

եալ»-ը սոսկ զարդանկարուած չհամարուի, աւելցուած է «կերպարանաւք»-ը, այսինքն նկարազարդուած է նաեւ տէրունական պատկերներով: Սակայն նկարիչ եւ ծաղկող բառերը յաճախ գործածուել են նաեւ որպէս հոմանիշներ: 1280թ. մի նկարիչ (ցաւօք անունը չի տալիս) յիշատակարանում գրում է. «Ջնկարող սուրբ Աւետարանիս յիշեա՛ ասելով՝ Տէր Աստուած, ողորմեա ծաղկողի սորա, ամէն» (ԺԳ, 514):

Վանում, Աղթամարում, Ոստանում մի շարք մատեաններ է պատկերազարդել Ծերուն ծաղկողը: 1391թ. մի Աւետարանի յիշատակարանում նա գրում է. «Ոչ յիշելիս ի գրչաց, զԾերուն մեղապարտ ծաղկողս յիշեցէք» (ԺԴ, 594): Նոյն մատեանում ստացող Սիմէոնը շեշտում է, որ գիրքը տուել է նկարազարդելու «տնաւրինականաւքն եւ ցանկաւք (խորաններով, Կ. Մ.) եւ ծաղկաւք, ձեռամբ յոգնամեղ Ծերունի...» (ԺԴ, 595):

Ձեռագրերում սակաւաբառ յիշատակարաններ են թողել Վասպուրականի եւ Վանայ լճի յարակից շրջանների նկարիչներ Զաքարիա Աղթամարցին, Կիրակոս Աղբակեցին, Ռստակէս Խիզանցին, Կարապետ Վանեցին, Մելքիսեդէկը, Աստուածատու Արծիշեցին, Ներսէսը եւ միւսները: Շնորհալի մանրանկարիչ Մինասը, որ յիշատակարանում իրեն մեղքերի մէջ կորած «բազմաւէր հոգի» է կոչում, ահա թէ ինչպէս է մեծարւում Արծիշեցի Յովհաննէս գրչի կողմից. «Աղաչեմ յիշել... զանյաղթ նկարող սորա զտէր Մինաս սըրբասնեալ կրօնաւորն՝ զքաղցրատեսն եւ զհեզահոգին, զողորմածն եւ զաղքատասէրն եւ զամենայն առաքինութեամբ զարդարեալն...» (ԺԵ.Բ, 135): Մինասի գունավառ ու լուսաւոր արուեստն այդ բնութագրման լաւագոյն հաւաստումն է: սակայն պատահում էր, որ գրիչը կամ ստացողը նկարչին գովաբանում էին այլ նպատակով, ինչպէս այդ արել է գրիչ Բարդուղիմէոսը 1485թ. «Տէս ոնց գովեցի զքեզ, վարպետ, լա՛ւ ծաղկէ զՍաղմոսարանս» (ԺԵ.Գ, 73):

1404թ. Հիզանում աշխատող Յովհաննէս նկարիչը գրում է, որ մագաղաթի սովոր չէր («յոյժ տրտում են... անկիրթ էի մագաղաթի», ԺԵ.Ա, 46), հաւանաբար մինչ այդ միայն թղթի վրայ գրուած մատեաններ է նկարազարդել:

1304թ. Նախիջեւան քաղաքում գրուած եւ մերձակայ Աստապատում նկարազարդուած մի ձեռագրի յիշատակարանում առաջին անգամ հանդիպում է «Նաղաշութիւն» բառը (արաբական ծագուն ունի), որպէս ծաղկել-նկարազարդելու համարժէք. «... կատարեցաւ Նաղաշութիւն սորայ ի մեծ դաստակերտն Աստապատ» (ԺԴ, 25): 1407թ. Տաթեւում ստացող Յովհաննէսը խնդրում է յիշել «հոգնահեզ եւ հաւատարիմ Նաղաշին՝ Հայրապետին, որ բազում աշխատանաւք Նաղաշեաց զԱւետարանս» (ԺԵ.Ա, 77): Թէեւ նկարիչներին տրուող Նաղաշ մականունը շատ տարածուած չէր, բայց գործածուել է շուրջ երեք դար, ընդհուպ մինչեւ բազմերախտ Յովնաթանեան նկարիչների տոհմի նահապետ համարուող Նաղաշ Յովնաթանը (1661-1722): Վերջինիս հայրը նոյնպէս նկարիչ էր, բայց Նաղաշ մականուն չունէր:

Սանահնի գրչութեան կենտրոնի ամենանշանաւոր գրիչն ու ծաղկողն էր Յովհաննէս Սանահնեցին, որի երկու ինքնանկարներ են հասել մեզ: Յիշատակարաններում համառօտաբան է: 1423թ. ծաղկած շարակնոցում գրում է. «Ըստ կարի տկարութեան իմոյ... ծաղկեցի զսա ոսկիճաճանչ զարդուք եւ զանազան գունովք» (ԺԵ.Ա, 303): 1456թ. Վերին Նորավանքում յիշուում է «անհաս

նկարող» Եսային, «որ երփն երփն գունով ծաղկափրթիթ զարդարեաց... Տօնականս...» (ԺԵ.Բ, 65): Իսկ խաչատուր ծաղկողը 1431թ. Տիրամօրն է դիմում չափածոյ յիշատակարանով.

«զթեզ աղաչեմ զսուրբ Տիրուհի,

Բարեխաւսեայ առ քոյտ Որդի,

Զծաղկողս յիշէ եւ ողորմի...» (ԺԵ.Գ, 379):

1473թ. Երզնկայում գրուած մի յիշատակարանում նշուում է. «Զվարպետն՝ զՍամուէլ պատկերահանն...» (ԺԵ.Բ, 354): Հետաքրքիր է, որ պատկերահան բառը գործածուում է դեռեւս Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» մէջ: Նկարիչ Ագարիան օգտագործում է նկարակերտութիւն բառը. «Եղեւ նկարակերտութիւն ի յերկիրն Գանձակայ...» (ԺԵ.Բ, 272): Երբեմն նկարչի աշխատանքի գնահատման չափանիշ է եղել նաեւ արագ նկարելը: 1463թ. Եւդոկիայում Անդրէաս գրիչը յիշատակում է իր եղբայր եւ հոգեւոր հայր Գրիգորին. «ԶԳրիգոր... զարագ նկարողն» (ԺԵ.Բ, 203):

Այրարատի գրչութեան կենտրոններում աշխատած նկարիչ Ստեփանոս Առնջեցի եպիսկոպոսը յիշատակարաններից մէկում գրում է. «... ծաղկեցաւ ձեռամբ Ստեփանոս եպիսկոպոսի յԱռնջեցոյ, համաբարբառս՝ աւետարաններով եւ խորանով եւ մանրածաղկով» (ԺԵ.Գ, 228): Ուշագրաւ է, որ հեղինակը, առաջինը լինելով, մանրածաղիկ գողտրիկ բառով է կոչում ձեռագրի լուսանցազարդերը: Մէկ այլ տեղ Ստեփանոս Առնջեցին գրում է. «Ծաղկեցաւ ոսկով եւ բազմերամ գուններով ի բազում միջոցաւ» (ԺԵ.Գ, 281): Յիշատակարաններից մէկում նկարիչը նշում է, որ մատեանի պատկերազարդման ընթացքում օգտագործուել, ձուլուել ու ոսկեղեղի է վերածուել 10 ոսկեղրամ. «Ժ (10) ոսկի գնաց գրոցս» (ԺԵ.Գ, 200):

Ոստանցի գրիչ եւ ծաղկող Աստուածատուրն ուսուցչին ու նրանից ուսանածը հետեւեալ կերպ է յիշատակում. «Յիշեցէք զվարդապետն իմ զՅակոբ, որ բազում աշխատեցաւ ի վերայ իմ եւ ուսոյց ինձ զսաղմոս, զչարական, զխազտետր, զգծագրութիւն եւ զամենայն բարեձեւութիւն...» (ԺԵ. Ա, 227):

Տփղիսի (Թիֆլիս) հայ գրչութեան բազմարդիւն կենտրոնի շնորհալի ներկայացուցիչ Մանուէլ մանրանկարչի վարպետութիւնն ընդգծելու համար Յովհաննէս գրիչը նրան կոչում է «հանճարեղ եւ ձեռնահմուտ... նկարող» (ԺԵ. Գ, 425):

Այսքանով սահմանափակենք մեր խօսքը հայ մանրանկարիչների յիշատակարանների վերաբերեալ, որոնք, ինչպէս տեսանք, բազմաթիւ հետաքրքրական փաստեր, տեղեկութիւններ, բառեր ու տերմիններ (եզրեր) են պարունակում մեր միջնադարեան արուեստի վերաբերեալ: Հայ ձեռագրագիտութեան ու արուեստաբանութեան բազմաքանքար երախտաւոր Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանը գրում է. «... փոքրիկ յիշատակարանները իրենց բազմատեսակ մանր տեղեկութիւններով մոզայիկի գոյնզգոյն քարեր են, որոնցից արուեստագէտը ի մի բերելով եւ օգտագործելով հարկաւորը իւր նպատակի համար, կազմում է գունազարդ, կենդանի եւ գեղարուեստական պատկեր» (ՅԶ, էջ ԺԴ): Թէ որքանով է մեզ յաջողուել հայ մանրանկարիչների փոքր յիշատակարաններից մի խճանկար կազմել, ընթերցողը կը դատի: Յիշատակագիրների աւանդութեամբ աւելացնենք միայն. «Ով ընթերցողք, սխալանացս անմեղադիր լերուք, զի կար մեր այսչափ էր»:

ԱԿՋԲՆԱՂԲԻՒՐՆԵՐ

(Համառոտագրութիւնների բանալի)

ՅԶ – Գ. Յովսէփեան, «Յիշատակարան ձեռագրաց», հ. Ա. Անթիլիաս 1951**Ե-ԺԲ** – «Ե-ԺԲԴԴ. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» /աշատասիրութեամբ Ա. Մաթեոսեանի/, Երեւան, 1988:**ԺԳ** – «ԺԳ դարի Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» /կազմեց Ա. Մաթեոսեան/, Երեւան, 1984:**ԺԴ** – «ԺԴ դարի Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» /կազմեց Լ. Խաչիկեան/, Երեւան, 1950:**ԺԵ.Ա** – «ԺԵ դարի Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» /կազմեց Լ. Խաչիկեան/, մասն Ա, Երեւան, 1955:**ԺԵ.Բ** – «ԺԵ դարի Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» /կազմեց Լ. Խաչիկեան/, մասն Բ, Երեւան, 1958:**ԺԵ.Գ** – «ԺԵ դարի Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» /կազմեց Լ. Խաչիկեան/, մասն Գ. Երեւան, 1967

ԿԱՐԷՆ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

Պատմական գիտութիւնների թեկնածու

Երեւան



Նորայր Վրդ. Պողարեան վերատեսուչ Անթիլիասի Դպրեվանոց, 1935 Դեկտեմբեր 27: Զախէն Աջ՝ Դերենիկ Վրդ. Փօլատեան, Նորայր Վրդ. Պողարեան, Դարեգին Արֆ. Յովսէփեանց (1945-ին կաթողիկոս), Զարեհ Վրդ, Փայասլեան: